

*Հավելված 1*

<b>Հաստատված է</b>	<b>Նոր խմբագրությամբ հաստատված է</b>
<i>Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի հիմնադիր ժողովի կողմից</i>	<i>Հայաստանի Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի կողմից</i>
<i>28. նոյեմբեր, 2014թ.</i>	<i>30 հունիս, 2016թ.</i>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ**

**2015-2016թթ.**

**ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ**

**(Նոր խմբագրությամբ)**

**ԵՐԵՎԱՆ**

*Հայաստանի Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիան (այսուհետև՝ Կոալիցիա) կարևորելով Հայաստանում ընթացող հակակոռուպցիոն բարեփոխումները, մշակել է սույն մոնիթորինգային ծրագիրը (այսուհետև՝ Ծրագիր):*

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել.

## **Խնդիր 1.**

**Հանրային վերահսկողության և մոնիթորինգի ենթարկել ՀՀ կառավարության ծրագրի հակակոռուպցիոն բաղադրիչները.**

### **Գործողություն 1.1**

Ծրագրով նախատեսված գործողությունների, աշխատանքների իրականացման ընթացակարգերի ու ժամանակացույցի և իրականացված գործողությունների, աշխատանքների ընթացակարգերի ու ժամանակացույցի համեմատականների վերլուծություն

*Ժամանակահատված՝ 2016թթ.*

*Պատասխանատու՝* Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ կառավարության ծրագրի հակակոռուպցիոն ասպեկտների մոնիթորինգի հանձնախումբ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

### **Գործողություն 1.2**

Մոնիթորինգի ենթարկել ծրագրի շրջանակներում կատարվելիք պետական գնումները

*Ժամանակահատված՝ 2016*

*Պատասխանատու՝* Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ կառավարության ծրագրի հակակոռուպցիոն ասպեկտների մոնիթորինգի հանձնախումբ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

### **Գործողություն 1.3**

Ուսումնասիրել ծրագրով նախատեսված պետական գնումների գործընթացի համապատասխանությունը գնումների մասին օրենսդրությանը

## **Ակնկալվող արդյունքներ**

Արձանագրվել են ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված հակակոռուպցիոն գործողությունների և աշխատանքների իրականացման ժամանակացույցից շեղվելու ու հետաձգվելու փաստերի վերաբերյալ վերլուծություններ: Վեր են հանվել ծրագրի

շրջանակներում կատարված պետական գնումների իրականացման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը: Դրանց վերաբերյալ հաշվետվություններն ու առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կառավարությանը, ոլորտային նախարարություններին, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին, միջազգային կազմակերպություններին և շահագրգիռ այլ անձանց: Հանրային վերահսկողության և մոնիթորինգի հաշվետվությունները հանրայնացվել են, հրապարակվել են ինտերնետային կայքերի միջոցով, այդ թվում Իրավաբան.net-ի միջոցով:

## **Խնդիր 2.**

**Հանրային վերահսկողության և մոնիթորինգի ենթարկել ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը.**

### **Գործողություն 2.1**

Ուսումնասիրել ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի վերաբերյալ առկա մոնիթորինգային հաշվետվությունների արդյունքներն ու խնդիրները, մշակել առաջարկությունների փաթեթ՝ նոր ՀՀ իրավական և դատական բարեփոխումների ռազմավարական ծրագիր մշակելու համար, դրանք ներկայացնել համապատասխան մարմիններին, ինչպես նաև կազմակերպել և մասնակցել հանրային քննարկումներին:

*Ժամանակահատված՝ 2016թթ.*

*Պատասխանատու՝* Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի մոնիթորինգի հանձնախումբ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

### **Գործողություն 2.2**

Ծրագրով նախատեսված գործողությունների, աշխատանքների իրականացման ընթացակարգերի ու ժամանակացույցի և իրականացված գործողությունների, աշխատանքների ընթացակարգերի ու ժամանակացույցի համեմատականների վերլուծություն

*Ժամանակահատված՝ 2016թթ.*

*Պատասխանատու՝* Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի մոնիթորինգի հանձնախումբ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

### **Գործողություն 2.3**

Մոնիթորինգի ենթարկել ծրագրով նախատեսված պետական գնումները.

*Ժամանակահատված՝ 2016*

*Պատասխանատու՝* Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի մոնիթորինգի հանձնախումբ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

### **Ակնկալվող արդյունքներ**

2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի գործողությունների և աշխատանքների իրականացման ժամանակացույցից շեղվելու ու հետաձգելու փաստերի վերաբերյալ վերլուծություններ: Վեր են հանվել ծրագրի շրջանակներում կատարված պետական գնումների իրականացման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը: Ուսումնասիրվել են 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի վերաբերյալ առկա մոնիթորինգային հաշվետվությունների արդյունքները, վեր են հանվել տեղ գտած խնդիրները: Դրանց վերաբերյալ հաշվետվություններն ու առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կառավարությանը, ՀՀ արդարադատության նախարարությանը, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին, միջազգային կազմակերպություններին և շահագրիտ այլ անձանց: Հանրային վերահսկողության և մոնիթորինգի հաշվետվությունները հանրայնացվել են, հրապարակվել են ինտերնետային կայքերի միջոցով, այդ թվում Իրավաբան.net-ի միջոցով:

### **Խնդիր 3.**

**Հանրային վերահսկողության և մոնիթորինգի ենթարկել 2015-2018թթ. Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը, ծրագրով նախատեսված հակակոռուպցիոն ծրագրերի առաջնահերթ իրականացման ոլորտները.**

#### **Գործողություն 3.1**

Ուսումնասիրել կրթության, առողջապահության, պետական եկամուտների հավաքագրման, քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով ոստիկանության ոլորտների վերաբերյալ առկա մոնիթորինգային հաշվետվությունների արդյունքներն ու խնդիրները, մշակել ոլորտային առաջարկությունների փաթեթ և ներկայացնել համապատասխան մարմիններին, ինչպես նաև դրանց վերաբերյալ կազմակերպել և մասնակցել հանրային քննարկումներին:

*Ժամանակահատված՝ 2016թթ.*

*Պատասխանատու՝* Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ 2015-2018թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախումբ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

### **Գործողություն 3.2**

Պարզել ծրագրով նախատեսված գործողությունների և աշխատանքների (բացառությամբ հակակոռուպցիոն ծրագրերի առաջնահերթ իրականացման ոլորտները) արդյունավետության, դրանց իրականացման ընթացակարգերի ու ժամանակացույցի և իրականացված գործողությունների ու աշխատանքների արդյունավետության և ընթացակարգերի ու ժամանակացույցի համեմատականների վերլուծություն

*Ժամանակահատված՝ 2016թթ.*

*Պատասխանատու՝* Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ 2015-2018թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախումբ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

### **Գործողություն 3.3**

Ծրագրով նախատեսված գործողությունների և աշխատանքների իրականացման ընթացակարգերի ու ժամանակացույցի և իրականացված գործողությունների ու աշխատանքների ընթացակարգերի ու ժամանակացույցի համեմատականների վերլուծություն

*Ժամանակահատված՝ 2016թթ.*

*Պատասխանատու՝* Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախմբի Կրթության ոլորտի ենթահանձնախումբ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

### **Գործողություն 3.4**

Մոնիթորինգի ենթարկել ծրագրի կրթության ոլորտում նախատեսված պետական գնումները.

*Ժամանակահատված՝ 2016*

*Պատասխանատու՝* Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ 2015-2018թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախմբի Կրթության ոլորտի ենթահանձնախումբ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

### **Գործողություն 3.5**

Ծրագրի պետական եկամուտների հավաքագրման ոլորտում նախատեսված գործողությունների և աշխատանքների իրականացման ընթացակարգերի ու

Ժամանակացույցի ու իրականացված գործողությունների և աշխատանքների ընթացակարգերի ու ժամանակացույցի համեմատականների վերլուծություն

*Ժամանակահատված՝ 2016թթ.*

*Պատասխանատու՝* Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ 2015-2018թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախմբի Պետական եկամուտների հավաքագրման ոլորտի ենթահանձնախումբ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

### **Գործողություն 3.6**

Մոնիթորինգի ենթարկել ծրագրի պետական եկամուտների հավաքագրման ոլորտում նախատեսված պետական գնումները.

*Ժամանակահատված՝ 2016*

*Պատասխանատու՝* Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ 2015-2018թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախմբի Պետական եկամուտների հավաքագրման ոլորտի ենթահանձնախումբ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

### **Գործողություն 3.7**

Ծրագրի քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով ուստիկանության ոլորտում նախատեսված գործողությունների և աշխատանքների ընթացակարգերի ու իրականացման ժամանակացույցի ու իրականացված ընթացակարգերի ու գործողությունների և աշխատանքների ժամանակացույցի համեմատականների վերլուծություն

*Ժամանակահատված՝ 2016թթ.*

*Պատասխանատու՝* Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ 2015-2018թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախմբի Քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով ուստիկանության ոլորտի ենթահանձնախումբ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

### **Գործողություն 3.8**

Մոնիթորինգի ենթարկել ծրագրի քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով ուստիկանության ոլորտում նախատեսված պետական գնումները.

*Ժամանակահատված՝ 2016*

*Պատասխանատու*՝ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ 2015-2018թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախմբի Քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով ոստիկանության ոլորտի ենթահանձնախումբ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

### **Գործողություն 3.9**

Ծրագրի առողջապահության ոլորտում նախատեսված գործողությունների և աշխատանքների իրականացման ընթացակարգերի ու ժամանակացույցի, ու իրականացված գործողությունների և աշխատանքների ընթացակարգերի ու ժամանակացույցի համեմատականների վերլուծություն

*Ժամանակահատված*՝ 2016թթ.

*Պատասխանատու*՝ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ 2015-2018թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախմբի Առողջապահության ոլորտի ենթահանձնախումբ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

### **Գործողություն 3.10**

Մոնիթորինգի ենթարկել ծրագրի առողջապահության ոլորտում նախատեսված պետական գնումները.

*Ժամանակահատված*՝ 2015-2016

*Պատասխանատու*՝ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ 2015-2018թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախմբի Առողջապահության ոլորտի ենթահանձնախումբ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

### **Գործողություն 3.11**

Ուսումնասիրել ծրագրի առողջապահության ոլորտում նախատեսված պետական գնումների գործընթացի համապատասխանությունը գնումների մասին օրենսդրությանը

### **Ակնկալվող արդյունքներ**

Արձանագրվել են Հայաստանի Հանրապետության 2015-2016թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրով նախատեսված գործողությունների և աշխատանքների իրականացման անարդյունավետության դեպքերը, իրականացման ժամանակացույցից շեղվելու ու հետաձգելու փաստերը, ինչպես նաև ծրագրի հակակոռուպցիոն ծրագրերի առաջնահերթ իրականացման ոլորտներով նախատեսված գործողությունների և

աշխատանքների իրականացման ժամանակացույցից շեղվելու ու հետաձգելու փաստերը: Վեր են հանվել ծրագրի հակակոռուպցիոն ծրագրերի առաջնահերթ իրականացման ոլորտների շրջանակներում կատարված պետական գնումների իրականացման ընթացքում առկա կոռուպցիոն ռիսկերը: Դրանց վերաբերյալ հաշվետվություններն ու առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կառավարությանը, ոլորտային նախարարություններին, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին, միջազգային կազմակերպություններին և շահագրիտ այլ անձանց: Հանրային վերահսկողության և մոնիթորինգի հաշվետվությունները հանրայնացվել են, հրապարակվել են ինտերնետային կայքերի միջոցով, այդ թվում Իրավաբան.net-ի միջոցով:

#### **Խնդիր 4.**

**Հանրային վերահսկողության և մոնիթորինգի ենթարկել Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը.**

##### **Գործողություն 4.1**

Պարզել Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված գործողությունների և աշխատանքների իրականացման ընթացակարգերից ու ժամանակացույցից շեղվելու և հետաձգելու փաստերը.

*Ժամանակահատված՝ 2016թթ.*

*Պատասխանատու՝* Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման մոնիթորինգի հանձնախումբ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

##### **Ակնկալվող արդյունքներ**

Արձանագրվել են Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ընթացակարգերից ու ժամանակացույցից շեղվելու ու հետաձգելու փաստերը: Դրանց վերաբերյալ հաշվետվություններն ու առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կառավարությանը, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին, միջազգային կազմակերպություններին և շահագրիտ այլ անձանց: Հանրային վերահսկողության և մոնիթորինգի հաշվետվությունները հանրայնացվել են, հրապարակվել են ինտերնետային կայքերի միջոցով, այդ թվում Իրավաբան.net-ի միջոցով:

#### **Խնդիր 5.**

**Զարգացնել ՔՀԿ-Բիզնես-Կառավարություն երկխոսությունը՝ բիզնես (հարկային, մաքսային, պետական գնումներ, ազատ տնտեսական մրցակցություն, լիցենզիաներ և**

**թույլտվություններ, գույքի նկատմամբ գերակա շահ ճանաչելու գորըթնաց) ոլորտում բարեփոխումների իրականացման նպատակով:**

#### **Գործողություն 5.1.**

Կառավարության, բիզնես սեկտորի և ՔՀԿ-ների մասնակցությամբ կազմակերպել մասնագիտական քննարկումներ բիզնես (հարկային, մաքսային, պետական գնումներ, ազատ տնտեսական մրցակցություն, լիցենզիաներ և թույլտվություններ, գույքի նկատմամբ գերակա շահ ճանաչելու գորըթնաց) ոլորտում, վեր հանել ոլորտի կոռուպցիոն ռիսկերն ու խնդիրները, համատեղ աշխատանքային ձևաչափերի միջոցով մշակել և Կառավարությանը ներկայացնել բիզնես ոլորտի բարեփոխումների առաջարկներ:

*Ժամանակահատված՝ 2016թթ.*

*Պատասխանատու՝* Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի Բիզնես ոլորտի մոնիթորինգի հանձնախումբ

#### **Ակնկալվող արդյունքներ**

Բիզնես (հարկային, մաքսային, պետական գնումներ, ազատ տնտեսական մրցակցություն, լիցենզիաներ և թույլտվություններ, գույքի նկատմամբ գերակա շահ ճանաչելու գորըթնաց) ոլորտում կոռուպցիոն ռիսկերն ու խնդիրները վեր են հանվել, համատեղ աշխատանքային ձևաչափերի միջոցով համապատասխան առաջարկությունները մշակվել են, դրանց վերաբերյալ հաշվետվություններն ու առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կառավարությանը, ոլորտային մարմիններին, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին, միջազգային կազմակերպություններին և շահագրիտ այլ անձանց: Հանրային վերահսկողության և մոնիթորինգի հաշվետվությունները հանրայնացվել են, հրապարակվել են ինտերնետային կայքերի միջոցով, այդ թվում Իրավաբան.net-ի միջոցով:

#### **Խնդիր 6.**

**Իրականացնել վերլուծություն ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ:**

#### **Գործողություն 6.1.**

Իրականացնել վերլուծություն ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ՝ հիմնվելով միջազգային փորձի ուսումնասիրության վրա, միաժամանակ ուշադրություն դարձնելով դրանից բխող հնարավոր բացասական հետևանքների վրա, կազմակերպել հանրային քննարկումներ իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ:

#### **Գործողություն 6.2.**

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից հայտարարագրվող գույքի և եկամուտների շրջանակի, նրանց հետ փոխկապակցված անձանց շրջանակի, բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման շրջանակների ընդլայնմանն ուղղված առաջարկությունների փաթեթի ներկայացում ՀՀ իրավասու մարմիններին, կազմակերպել և մասնակցել հանրային քննարկումներին:

*Ժամանակահատված՝ 2016թթ.*

*Պատասխանատու՝* Պետություն-քաղաքացիական հասարակություն հակակոռուպցիոն աշխատանքային հարթակի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ վերլուծություն իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբում Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան ներկայացնող անդամներ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ:

### **Ակնկալվող արդյունքներ**

Արձանագրվել են ապօրինի հարստացման քրեականացման դրական և բացասական կողմերը, դրա արդյունավետության չափորոշիչները, ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին, հանցակազմի իրականացման ժամանակացույցը հաստատվել է: Ներկայացվել են բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից հայտարարագրվող գույքի և եկամուտների շրջանակի, նրանց հետ փոխկապակցված անձանց շրջանակի, բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման շրջանակների ընդլայնման անհրաժեշտությունը, կազմակերպվել են հանրային քննարկումներ: Հանրային վերահսկողության և մոնիթորինգի հաշվետվությունները հանրայնացվել են, հրապարակվել են ինտերնետային կայքերի, այդ թվում Իրավաբան.net-ի միջոցով:

### **Խնդիր 7.**

**Իրականացնել ուսումնասիրություն Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ:**

#### **Գործողություն 7.1.**

Իրականացնել ուսումնասիրություն Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի մշակման և ներդրման վերաբերյալ՝ հիմնվելով միջազգային փորձի ուսումնասիրման վրա, միաժամանակ ուշադրություն դարձնելով դրանից բխող հնարավոր բացասական հետևանքների վրա, կազմակերպել հանրային քննարկումներ իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ:

*Ժամանակահատված՝ 2016թթ.*

*Պատասխանատու՝* Պետություն-քաղաքացիական հասարակություն հակակոռուպցիոն աշխատանքային հարթակի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբում Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան ներկայացնող անդամներ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ:

### **Ակնկալվող արդյունքներ**

Արձանագրվել են Հայաստանում Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի ներդրման դրական և բացասական կողմերը, դրա արդյունավետության չափորոշիչները, ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին, համակարգի ներդրման իրականացման ժամանակացույցը հաստատվել է: Հանրային վերահսկողության և մոնիթորինգի հաշվետվությունները հանրայնացվել են, հրապարակվել են ինտերնետային կայքերի, այդ թվում Իրավաբան.net-ի միջոցով:

### **Խնդիր 8.**

**Իրականացնել ուսումնասիրություն կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդում ներկայացնող անձանց իրավական պաշտպանության երաշխիքները ՀՀ-ում սահմանելու վերաբերյալ և օրենքի նախագիծ մշակելու նպատակով:**

#### **Գործողություն 8.1.**

Իրականացնել ուսումնասիրություն կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդում ներկայացնող անձանց իրավական պաշտպանության երաշխիքները ՀՀ-ում սահմանելու վերաբերյալ և օրենքի նախագիծ մշակելու նպատակով՝ հիմնվելով միջազգային փորձի ուսումնասիրման վրա, կազմակերպել հանրային քննարկումներ իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ:

*Ժամանակահատված՝ 2016թթ.*

*Պատասխանատու՝* Պետություն-քաղաքացիական հասարակություն հակակոռուպցիոն աշխատանքային հարթակի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդում ներկայացնող անձանց իրավական պաշտպանության երաշխիքները ՀՀ-ում սահմանելու վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու և համապատասխան օրենքի նախագիծ մշակելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբում Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն

կոալիցիան ներկայացնող անդամների, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ների ներգրավմամբ:

### **Ակնկալվող արդյունքներ**

Արձանագրվել են Հայաստանում կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդում ներկայացնող անձանց իրավական պաշտպանության երաշխիքները և օրենքի նախագիծ մշակելու անհրաժեշտությունը, ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին, դրա իրականացման ժամանակացույցը հաստատվել է: Հանրային վերահսկողության և մոնիթորինգի հաշվետվությունները հանրայնացվել են, հրապարակվել են ինտերնետային կայքերի, այդ թվում Իրավաբան.net-ի միջոցով:

### **Խնդիր 9.**

**Իրականացնել հանրային վերահսկողություն պետական գնումների և պահուստների, ՏԻՄ գնումների և արտաբյուջեների շրջանակներում կատարվող գնումների ոլորտում իրականացվող քաղաքականության նկատմամբ:**

#### **Գործողություն 9.1.**

Իրականացնել հանրային վերահսկողություն պետական գնումների և պահուստների, ՏԻՄ գնումների և արտաբյուջեների շրջանակներում կատարվող գնումների ոլորտում իրականացվող քաղաքականության նկատմամբ, Իրավաբան.net-ի միջոցով պետական գնումների ոլորտում իրականացնել հետաքննություն, դրանց միջոցով վեր հանել ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը, կազմակերպել հանրային քննարկումներ իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ:

*Ժամանակահատված՝ 2016թթ.*

*Պատասխանատու՝* Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի պետական գնումների և պահուստների, ՏԻՄ գնումների և արտաբյուջեների շրջանակներում կատարվող գնումների մոնիթորինգի հանձնախումբ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

### **Ակնկալվող արդյունքներ**

Արձանագրվել են պետական գնումների և պահուստների, ՏԻՄ գնումների և արտաբյուջեների շրջանակներում կատարվող գնումների ոլորտի խնդիրները, առկա կոռուպցիոն ռիսկերը: Դրանց վերաբերյալ հաշվետվություններն ու առաջարկությունները, ինչպես նաև Իրավաբան.net-ի միջոցով իրականացված հետաքննության արդյունքները ներկայացվել են ՀՀ կառավարությանը, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին, միջազգային կազմակերպություններին և շահագրիռ այլ անձանց: Հանրային վերահսկողության և

մոնիթորինգի հաշվետվությունները հանրայնացվել են, հրապարակվել են ինտերնետային կայքերի, այդ թվում Իրավաբան.net-ի միջոցով: